ՎԴ5/0283/05/24
ԵԴ2/5857/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 օգոստոսի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահին փոխարինող Արման Թովմասյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահին փոխարինող Ելիզավետա Դանիելյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ5/0283/05/24 (ԵԴ2/5857/02/24) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 6-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Լարիսա և Արմինե Սիմոնյանները 2024 թվականի ապրիլի 26-ին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ նոտարական պալատի և Հայկանուշ Սիմոնյանի՝ «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, այն է՝ 2011 թվականի հուլիսի 15-ին «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի կողմից տրված թիվ 2035 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ 2011 թվականի օգոստոսի 2-ին

կատարված Արթիկ քաղաքի Լմբատ 2 թաղամասի 08 շենքի թիվ 4 հասցեի բնակարանի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը, թիվ 2841 անշարժ գույքի գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու, նշված գույքի բռնագանձման գործընթացը դադարեցնելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի մայիսի 3-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է այն հիմնավորմամբ, որ պարզ չէ, թե որ նոտարական գործողություններն են վիճարկվում, իսկ այնուհետև՝ որոնք են ածանցվող և հիմնական պահանջները, պարզ չէ նաև, թե հայցապահանջներից որն է ուղված հայցադիմումում որպես պատասխանող նշված Հայկանուշ Սիմոնյանի դեմ:

3. Լարիսա և Արմինե Սիմոնյանները 2024 թվականի հունիսի 6-ին կրկին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ նոտարական պալատի՝ «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, այն է՝ 2011 թվականի հուլիսի 15-ին «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի կողմից տրված թիվ 2035 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ 2011 թվականի օգոստոսի 2-ին կատարված Արթիկ քաղաքի Լմբատ 2 թաղամասի 08 շենքի թիվ 4 հասցեի բնակարանի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը, թիվ 2841 անշարժ գույքի գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

4. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի հունիսի 13-ի որոշմամբ հայցադիմումը կրկին վերադարձվել է՝ այն հիմնավորմամբ, որ հայցվորները հայցադիմումին կից չեն ներկայացրել կրկին ներկայացված հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին ուղարկելու վերաբերյալ ապացույց:

5. Լարիսա և Արմինե Սիմոնյանները 2024 թվականի հուլիսի 3-ին հայցադիմումը կրկին են ներկայացրել ՀՀ վարչական դատարան:

6. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

8. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի օգոստոսի 8-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

9. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, 220-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ, 21-րդ հոդվածներին, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/4901/05/11, 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԱՐԴ1/0019/02/13 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Տվյալ դեպքում Դատարանն արձանագրում է, որ հայցվորների կողմից ներկայացված հայցադիմումը թեև ֆորմալ առումով բովանդակում է նոտարի գործողությունների վիճարկման պահանջ՝ հիմնական պահանջի մասով, այդուհանդերձ, հայցադիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վեճի բուն էությունը ժառանգության իրավունքի վկայագրի անվավերության շուրջ է՝ հիմնված հայցվորների կողմից ժառանգական հիմքով սեփականության իրավունք ունենալու վրա (հայցադիմումի 2-րդ էջ, 3-րդ պարբերություն, 6-րդ էջ, 5-րդ պարբերություն): Ընդ որում, թեև հայցադիմումում ձևական առումով վկայակոչված են «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքից իրավանորմեր, այդուհանդերձ, հայցադիմումը չի պարունակում որևէ փաստարկ նոտարի կողմից իրականացված ոչ իրավաչափ գործողության բովանդակության վերաբերյալ՝ միևնույն ժամանակ ողջ հայցադիմումում շեշտադրելով հայցվորների՝ ժառանգական գույքի*

նկատմամբ սեփականության իրավունք (այդ թվում՝ ժառանգական հիմքով) ունենալու փաստական հանգամանքը և ըստ էության «նոտարի անօրինական գործողությունների արդյունքում» (հայցադիմումի 2-րդ էջ, 5-րդ պարբերություն), «նոտարը կատարել է անօրինական գործարք» (6-րդ էջ, 3-րդ պարբերություն), «նշված անիրավաչափությունն առաջացել է նոտարի անօրինական գործողությունների հետևանքով» (7-րդ էջ, 4-րդ պարբերություն), ձևակերպումները վերաբերելի դարձնելով նոտարի կողմից ժառանգության վկայագրի տրամադրման փաստին ընդհանրապես, այլ ոչ նշվածի կապակցությամբ վերջինիս կողմից իրականացված ոչ իրավաչափ գործողություններին՝ մասնավորապես: Ասվածն առավել հիմնավոր է դառնում հայցադիմումի 6-րդ էջի 3-րդ պարբերությամբ արձանագրվածի պայմաններում, որտեղ հայցվորները տվյալ իրավիճակի առաջացումը կապում են Մուշեղ Սիմոնյանի կնոջ կողմից նոտարին սխալ տեղեկություն տրամադրելու հետ:

Ողջ վերոգրյալի համատեքստում Դատարանը ներքին համոզմունք է ձևավորում առ այն, որ սույն գործը, որի լուծման արդյունքում կարող են վերականգնվել հայցվորների ենթադրյալ խախտված իրավունքները, բխում է ոչ թե հանրային, այլ մասնավոր իրավահարաբերություններից, քանի որ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված են ոչ թե բուն նոտարական գործողությունների վիճարկումը, այլ անմիջականորեն ժառանգման իրավահարաբերություններից բխող փաստարկներ, ինչպես նաև հայցվորների՝ ժառանգական զանգվածի նկատմամբ նաև ժառանգական հիմքով սեփականության իրավունք ունենալու, ժառանգներից մեկի՝ նոտարին սխալ տեղեկություն տրամադրելու փաստական հանգամանքները և հետևաբար՝ ժառանգությունն ընդունելու կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճը, որպիսի հայցի հիմքը որևիցե կերպ կապված չէ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի, սույն դեպքում՝ նոտարի գործողություններով հայցվորների իրավունքների խախտման հետ, ուստիև դրա հիման վրա հարուցվելիք գործը ենթակա է լուծման մասնավոր իրավունքի նորմերի շրջանակում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ սույն վեճը չի ծագում հանրային իրավահարաբերություններից, ուստի դրա հիման վրա հարուցվելիք գործն

ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին և ենթակա է վերահսկողության առաջին ատյանի ընդհանուր իրավասության համապատասխան դատարան»[1]:

10. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, 220-րդ հոդվածի 1-ին մասին, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 27-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԱՐԴ1/0019/02/13 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) Սույն գործով հայցը հարուցվել է ընդդեմ ՀՀ նոտարական պալատի, ներկայացված հայցի փաստական հիմքում հայցվորները, ի թիվս այլնի, դրել են ժառանգատու Մուշեղ Սիմոնյանի ժառանգական զանգվածի նկատմամբ ոչ իրավաչափ կերպով Հայկանուշ Սիմոնյանի սեփականության իրավունքի գրանցման փաստը, ինչը պայմանավորել են այն փաստով, որ ՀՀ ք.Արթիկ, Լմբատ 2, 08 շենքի թիվ 4 հասցեում գտնվող բնակարանը Արթիկի քաղաքային ժողովրդական դեպուտատների 1990 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ հատկացվել է Արմիկ Ղուկասյանին, ում ընտանիքի կազմի մեջ, բացի ժառանգատուից ներառված են եղել նաև հայցվորները և վերջիններս համաձայնություն չեն տվել ամբողջ բնակարանը Հայկանուշ Սիմոնյանի անունով գրանցելու համար: Հայցի փաստական հիմքում հայվորները նաև դրել են ժառանգական զանգված համարվող գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ակնկալիք ունենալու, պատասխանողի՝ ի դեմս ՀՀ նոտարական պալատի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում հայցվորների սեփականության իրավունքը խախտված լինելու վերաբերյալ փաստերը:*

---

[1] Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 74-78:

(…)

Դատարանի գնահատմամբ, տվյալ պարագայում չպետք է անտեսվի հայցի հիմքում դրված այն փաստը, որ Արթիկի քաղաքային ժողովրդական դեպուտատների 1990 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ ՀՀ ք.Արթիկ, Լմբատ 2, 08 շենքի թիվ 4 հասցեում գտնվող բնակարանը հատկացնելու պահին Հայցվորները՝ ընտանիքի կազմում ներառված լինելու ուժով ունեն տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունք և ամբողջ վերը նշվածը կապել են նորարի ենթադրյալ անօրինական գործողությունների հետ:

Իսկ միայն այն, որ հայցվորները հայցադիմումում մատնանշել են Մուշեղ Սիմոնյանի առաջին հերթի ժառանգ հանդիսանալու և ժառանգական զանգված համարվող ՀՀ ք. Արթիկ, Լմբատ 2, 08 շենքի թիվ 4 հասցեում գտնվող տան նկատմամբ ժառանգ հանդիսանալու ուժով սեփականության իրավունք ունենալու փաստը, առանց ժառանգության ընդունման կամ ժառանգ ճանաչվելու պահանջ ներկայացնելու, Դատարանի գնահատմամբ դեռևս բավարար չէ վեճը քաղաքացիաիրավական որակելու համար:

Հայցի առարկայի մասով Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ չկա ներկայացված առնվազն մեկ հիմնական պահանջ, որը կարող է ինքնին քննության ենթակա լինել քաղաքացիական դատավարության կարգով:

Ժառանգական վեճի սուբյեկտային տեսանկյունից Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ժառանգական վեճի շրջանակներում հայցվորը և ՀՀ նորարական պալատը չեն կարող հանդես գալ որպես հակադիր շահերով օժտված սուբյեկտներ՝ հայցվորների և միայն ՀՀ նորարական պալատի միջև ինքնին չի կարող գոյություն ունալ ժառանգական վեճ:

Բացի այդ, Դատարանն անհրաժեշտ է համարում Վճռաբեկ դասարանի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ հայցադիմումին կից ներկայացվել է թիվ ՇԴ2/0011/02/24 քաղաքացիական գործով ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի ապրիլի 19-ի որոշումը՝ քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին, որի ուսումնասիրության արդյունքում, Դատարանն արձանագրում է, որ նշված գործով և սույն գործով գործին մասնակցող անձանց կազմը նույնն է՝ անկախ նրանց դատավարական

կարգավիճակից, հայցի առարկան, թեև ենթարկվել է ֆորմալ վերաձևակերպման, այնուամենայնիվ նույնն է, փաստական հիմքերը ևս նույնն են, ինչը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով հայցադիմումի ընդունումը մերժելու, իսկ արդեն իսկ վարույթ ընդունված հայցադիմումի առկայության պարագայում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով գործի վարույթը կարճելու հիմք է:

Մինչդեռ Դատարանը վերահաստատագրված հայցադիմով կաշկանդված է օրենքում ուղղակիկորեն ամրագրված երկու լիազորությամբ, այն է՝ հայցադիմումը վարույթ ընդունելու կամ ենթակայության հետ համաձայն չլինելու պարագայում ՀՀ վճռաբեկ դատարան դիմելու լիազորություններով:

Բայցևայնպես, Դատարանի գնահատմամբ վերը նշված իրավիճակը չի բխում գործին մասնակցող անձանց արդար դատաքննության իրավունքի ապահովման սկզբունքից և կարող է առաջացնել իրավական անորոշություն, որպիսի հանգամանքը ևս հիմք է հանդիսացել սույն գործը ՀՀ վճռաբեկ դատարան ուղարկելու համար»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

11. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ5/0283/05/24 (ԵԴ2/5857/02/24) գործն ըստ հայցի՝ Լարիսա և Արմինե Սիմոնյանների ընդդեմ ՀՀ նոտարական պալատի՝ «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, այն է՝ 2011 թվականի հուլիսի 15-ին «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի կողմից տրված թիվ 2035 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ 2011 թվականի օգոստոսի 2-ին կատարված Արթիկ քաղաքի Լմբատ 2 թաղամասի, 08 շենքի թիվ 4 հասցեի բնակարանի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը, թիվ 2841 անշարժ գույքի գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան*

[2] Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 90-92:

քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

12. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (…)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (…) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(…)

6. *Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները*

գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

Նույն օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են՝ նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը»:*

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Նոտարն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության*

Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (...), նույն օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի ու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (...) հիման վրա»:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«Նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է նույն օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ: Նոտարի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են միայն սույն օրենքով:*

Նոտարը նոտարական գործողություններ իրականացնում է փաստաթղթեր վավերացնելու կամ վավերացված փաստաթղթեր գրամադրելու կամ օրենքով նախատեսված այլ գործողություններ կատարելու միջոցով (...) »:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Անձը, որի շահերը շոշափում է նոտարի գործողությունը կամ անձը, որին մերժվել է նոտարական գործողություն կատարելը, կարող է կատարված նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը բողոքարկել դատարան»:*

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Նոտարն իրականացնում է հետևյալ նոտարական գործողությունները. վավերացնում է գործարքներ (պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, համաձայնագրեր և այլն)»:*

13. Ժառանգության իրավունքի վկայագիրը դատական կարգով վիճարկելու առանձնահատկություններին անդրադարձ է կատարվել ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Սերժիկ Պողոսյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, երրորդ անձ Սրյոպիկ Պողոսյան՝ վարչական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ*: Վճռաբեկ դատարանը եզրահանգել է. *«(...) ժառանգության իրավունքի վկայագիր գրամադրելիս նոտարն իրականացնում է հանրային գործառույթ, քանի որ ժառանգության իրավունքի վկայագրի գրամադրումը մերժելիս նոտարի և քաղաքացու միջև առկա են ոչ թե կոորդինացիոն (համադասություն) բնույթի,*

այլ սուբորդինացիոն (ենթակայություն) բնույթի իրավահարաբերություններ: Սույն իրավահարաբերություններում քաղաքացին և նոտարը հանդես չեն գալիս որպես մասնավոր իրավահարաբերությունների հավասար սուբյեկտներ: Նման իրավահարաբերություններում նոտարն օժտված չէ կամքի ազատությամբ, այլ հանդես է գալիս որպես հանրային իրավահարաբերությունների սուբյեկտ, որտեղ իրավահարաբերության մասնակիցներից մեկը, միակողմանի հիմնվելով իրավական կարգավորումների վրա, իրավահարաբերության մյուս կողմի համար պարտադիր որոշում է կայացնում:

(…) Ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջը չի կարող դիտարկվել նաև որպես նոտարական գործողությունը վիճարկելու պահանջ, եթե ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված չէ նոտարական գործողությունների վիճարկումը:

(…) նոտարը ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելիս իրականացնում է հանրային գործառույթ, սակայն միաժամանակ օժտված չէ պետական մարմնի կարգավիճակով, այսինքն՝ նոտարը ՀՀ իրավական համակարգում ոչ ինստիտուցիոնալ, ոչ գործառույթային առումով վարչական մարմին չէ, և երկրորդ՝ ժառանգության իրավունքի վկայագիրը տրվում է մասնավոր իրավունքի, մասնավորապես՝ ժառանգական իրավունքի կոնկրետ հարցի կարգավորման կապակցությամբ՝ ի տարբերություն վարչական ակտի, որն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում»[3]:

13.1. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերություն* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարբերն*

---

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Սերժիկ Պողոսյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, երրորդ անձ Ստյոպիկ Պողոսյան՝* վարչական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/4901/05/11 որոշումը:

առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[4]:

14. Սույն որոշման 12-13.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

---

[4] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերության*՝ վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

Ընդ որում, իրավահարաբերությունը որպես հանրային որակելու համար անհրաժեշտ է, առաջին հերթին, բացահայտել իրավահարաբերության տարրերը՝ օբյեկտը, սուբյեկտը և բովանդակությունը:

Հանրային իրավահարաբերությունների շարքում օրենսդիրը, ի թիվս այլ գործերի, դիտարկել է նաև նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ վեճերը, որոնց՝ հանրային իրավահարաբերություններից բխելու փաստը պարզելիս, դատարանը նախ պետք է բացահայտի, թե արդյոք քննության ենթակա վեճի հիմքում հայցվորի կողմից դրվել է նոտարական գործողությունների վիճարկումը, թե այն ծագել է մասնավոր իրավունքի ոլորտում կոնկրետ հարցի կարգավորման կապակցությամբ:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Լարիսա և Արմինե Սիմոնյանները 2024 թվականի ապրիլի 26-ին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ նոտարական պալատի և Հայկանուշ Սիմոնյանի՝ «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, այն է՝ 2011 թվականի հուլիսի 15-ին «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի կողմից տրված թիվ 2035 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ 2011 թվականի օգոստոսի 2-ին կատարված Արթիկ քաղաքի Լմբատ 2 թաղամասի 08 շենքի թիվ 4 հասցեի բնակարանի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը, թիվ 2841 անշարժ գույքի գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու, նշված գույքի բռնագանձման գործընթացը դադարեցնելու պահանջների մասին[5]:

- ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի մայիսի 3-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է այն հիմնավորմամբ, որ պարզ չէ, թե որ նոտարական գործողություններն են վիճարկվում, իսկ այնուհետ՝ որոնք են ածանցվող և հիմնական պահանջները, պարզ չէ նաև, թե հայցապահանջներից որն է ուղված հայցադիմումում որպես պատասխանող նշված Հայկանուշ Սիմոնյանի դեմ[6]:

- Լարիսա և Արմինե Սիմոնյանները 2024 թվականի հունիսի 6-ին կրկին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ նոտարական

---

[5] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

պալատի՝ «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, այն է՝ 2011 թվականի հուլիսի 15-ին «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի կողմից տրված թիվ 2035 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ 2011 թվականի օգոստոսի 2-ին կատարված Արթիկ քաղաքի Լմբատ 2 թաղամասի, 08 շենքի թիվ 4 հասցեի բնակարանի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը, թիվ 2841 անշարժ գույքի գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին[7]:

- ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի հունիսի 13-ի որոշմամբ հայցադիմումը կրկին վերադարձվել է՝ այն հիմնավորմամբ, որ հայցվորները հայցադիմումին կից չեն ներկայացրել կրկին ներկայացված հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին ուղարկելու վերաբերյալ ապացույց[8]:

- Լարիսա և Արմինե Սիմոնյանները 2024 թվականի հուլիսի 3-ին հայցադիմումը կրկին են ներկայացրել ՀՀ վարչական դատարան[9]:

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված է ոչ թե բուն նոտարական գործողությունների վիճարկումը, այլ՝ անմիջականորեն ժառանգման իրավահարաբերություններից բխող փաստարկներ, ինչպես նաև հայցվորների՝ ժառանգական զանգվածի նկատմամբ նաև ժառանգական հիմքով սեփականության իրավունք ունենալու, ժառանգներից մեկի՝ նոտարին սխալ տեղեկություն տրամադրելու փաստական հանգամանքները և հետևաբար՝ ժառանգությունն ընդունելու կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճը, որպիսի հայցի հիմքը որևիցե կերպ կապված չէ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի, սույն դեպքում՝ նոտարի գործողություններով հայցվորների իրավունքների խախտման հետ, ուստիև դրա հիման վրա հարուցվելիք գործը ենթակա է լուծման մասնավոր իրավունքի նորմերի շրջանակում[10]:

---

[7] Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով, որ չկա ներկայացված առնվազն մեկ հիմնական պահանջ, որը կարող է ինքնին քննության ենթակա լինել քաղաքացիական դատավարության կարգով: Ժառանգական վեճի շրջանակներում հայցվորը և ՀՀ նոտարական պալատը չեն կարող հանդես գալ որպես հակադիր շահերով օժտված սուբյեկտներ՝ հայցվորների և միայն ՀՀ նոտարական պալատի միջև ինքնին չի կարող գոյություն ունենալ ժառանգական վեճ: Բացի այդ, հայցադիմումին կից ներկայացվել է նույն անձանց միջև, ըստ էության՝ նույն առարկայի վերաբերյալ և նույն փաստական հիմքերով թիվ ՇԴ2/0011/02/24 քաղաքացիական գործով ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի ապրիլի 19-ի որոշումը, որով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է[11]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ Լարիսա և Արմինե Սիմոնյանների հայցի առարկան 2011 թվականի հուլիսի 15-ին «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի կողմից տրված թիվ 2035 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տալու նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջն է, այսինքն՝ նոտարի գործողության վիճարկումը, իսկ հայցի հիմքը՝ առանց ժառանգության զանգվածի կազմը պարզելու, սխալ տեղեկությունների հիման վրա նոտարական գործողության կատարումը: Հայցվորի փաստարկները նաև հանգում են նրան, որ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Լմբատ 2, 08 շենքի թիվ 4 հասցեում գտնվող բնակարանը Արթիկի քաղաքային ժողովրդական դեպուտատների 1990 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ հատկացվել է Արմիկ Ղուկասյանի ընտանիքին, որի կազի մեջ ներառված են եղել նաև հայցվորները, և վերջիններս վեճի առարկա գույքի նկատմամբ ունեցել են սեփականության իրավունք, մինչդեռ նոտարի կողմից Հայկանուշ Սիմոնյանին ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու և դրա

[11] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

հիման վրա վեճի առարկա գույքի նկատմամբ առանց հայցվորների համաձայնության միայն Հայկանուշ Սիմոնյանի սեփականության իրավունքը գրանցելու հետևանքով հայցվորները զրկվել են իրենց պատկանող գույքի նկատմամբ իրավունքներից:

Հետևաբար՝ հայցի առարկան հիմնավորող փաստարկների ուսումնասիրությունից հետևում է, որ հայցվորների նպատակը նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկումն է, այն է՝ 2011 թվականի հուլիսի 15-ին «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի կողմից տրված թիվ 2035 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տալու նոտարական գործողության իրավաչափության վիճարկումը, որի հետևանքով խախտվել են հայցվորների իրավունքները:

Այսինքն՝ սույն գործով պահանջի հիմքը ոչ թե անմիջականորեն ժառանգման իրավահարաբերություններից բխող, ժառանգությունն ընդունելու կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճն է, այլ՝ նոտարի գործողությունների վիճարկումը, հետևաբար սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

17. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ5/0283/05/24 (ԵԴ2/5857/02/24) գործն ըստ հայցի՝ Լարիսա և Արմինե Սիմոնյանների ընդդեմ ՀՀ նոտարական պալատի՝ «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, այն է՝ 2011 թվականի հուլիսի 15-ին «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի կողմից տրված թիվ 2035 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ 2011 թվականի օգոստոսի 2-ին կատարված Արթիկ քաղաքի Լմբատ 2 թաղամասի 08 շենքի թիվ 4 հասցեի բնակարանի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը, թիվ 2841 անշարժ գույքի գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

Ուստի, Լարիսա և Արմինե Սիմոնյանների հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ5/0283/05/24 (ԵԴ2/5857/02/24) գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ5/0283/05/24 (ԵԴ2/5857/02/24) գործն ըստ հայցի՝ Լարիսա և Արմինե Սիմոնյանների ընդդեմ ՀՀ նոտարական պալատի՝ «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, այն է՝ 2011 թվականի հուլիսի 15-ին «Արթիկ» նոտարական տարածքի նոտարի կողմից տրված թիվ 2035 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ 2011 թվականի օգոստոսի 2-ին կատարված Արթիկ քաղաքի Լմբատ 2 թաղամասի 08 շենքի թիվ 4 հասցեի բնակարանի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը, թիվ 2841 անշարժ գույքի գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐՄԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԵԼԻԶԱՎԵՏԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ